ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Ալեքսանդր Թամանյանի անվան
ճարտարապետության ազգային
թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի
տնօրեն _____ Մ.Վ.Գրիգորյան
3.06.2021 թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Շուշան Կարենի Հակոբյանի «Գյումրի քաղաքի՝ XIX դարի և XX դարի առաջին կեսի հասարակական շենքերի ճարտարապետությունը և արդիականացման խնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԸ.00.01-«Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը:

Շուշան Կարենի Հակոբյանի «Գյումրի քաղաքի՝ XIX դարի և XX դարի առաջին կեսի հասարակական շենքերի ճարտարապետությունը և արդիականացման խնդիրները» թեմայով ատենախոսությունը կազմված է 120 էջ տեքստային մասից, որն իր մեջ ներառում է նախաբանը հաջորդող երեք գլուխներ, եզրակացություններ, ընդհանուր եզրակացություն, 31 անվանմամբ գրականության ցանկ և հավելվածի տեսքով գրաֆիկական մաս 34 էջերով: Ատենախոսության սեղմագիրը ներկայացված է 21 էջով, որտեղ տրված է ատենախոսության թեմայով թվով 6 հրապարակումների ցանկ, ինչպես նաև ռուսերեն և անգլերեն անոտացիաներ:

Ատենախոսության **առաջաբանում** ներկայացված են **հետազոտության արդիականությունը**, **նպատակը, հիմնական խնդիրները, առարկան, սահմանները, մեթոդիկան, գիտական նորույթը, գործնական արժեքը** և այլն, որոնցից հետևում է, որ Գյումրու XIX դարի և XX դարի առաջին կեսի հասարակական շենքերի ճարտարապետությաուն վերլուծության և արդիականացման թեման այսօր հրատապ է: Այդ բարձրարժեք ժառանգությունը, որ քաղաքի ճարտարապետական դիմագիծն է ձևավորում, մասնագիտորեն լիարժեք ուսումնասիրված չէ: Ուսումնասիրության թեմայի շրջանակներում ընդգրկված հասարակական կառույցների վերլուծությունը, դրանց դիրքը քաղաքային միջավայրում, հատակագծային հորինվածքները, գործառնական կազմակերպումը, ճարտարապետա-գեղարվեստական լուծումները, պահպանվածության աստիճանի գնահատումը, դրանց արդիականացմանը վերաբերող աշխատանքների՝ այլ երկրներում ընդունված գործելակերպի ուսումնասիրությունը, ժամանակակից տեխնոլոգիաների ներուժի հնարավոր ազդեցության բացահայտումը, ինչպես նաև

Գյումրու պատմական կենտրոնում կառուցված հուշարձան-հասարակական շենքերի հետագա օգտագործման նպատակին ծառայող առաջարկությունների և հանձնարարականների առաջադրումը ներկայացված են որպես **հետազոտության հիմական խնդիրներ**:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ ներկայացված աշխատանքը խնդրո առարկա շենքերի առաջին համալիր հետազոտությունն է, որը ներառում է դրանց մասնագիտական դասակարգումն ըստ առանձնահատկությունների ու հորինվածքային լուծումների:

Հետազոտության գործնական արժեքը կայանում է նրանում, որ Գյումրու պատմա-ճարտարապետական ժառանգության տվյալ ժամանակաշրջանի հասարակական շենքերի վերականգման և արդիականացման խնդիրների ենթատեքստում մշակվել են գործնական նշանակության մի շարք առաջարկություններ (հաձնարարականներ), և կազմվել ուղղորդիչ նյութեր, որոնք հիմք կհանդիսանան շենքերի վերականգնմանը, հարմարեցված վերաօգտագործմանը միտված նախագծերի իրականացման համար:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Գյումրու քաղաքաշինական զարգացումը», ներկայացվում է Գյումրու պատմաաշխարհագրական նկարագրությունը, մեկնաբանվում է գլխավոր հատակագծի զարգացումը տարբեր փուլերում, բացահայտվում է Դ. Չիսլյանի ներդրումը շինարարական նյութերի և կոնստրուկտիվ համակարգի կիրառման մեջ՝ նկատի ունենալով քաղաքի զարգացման ուղին: Ատենախոսության առաջին գլուխը ավարտվում է համապատասխան եզրակացություններով, այդ թվում կարևորվում է, որ XIX դարի և XX դարի սկզբի ճարտարապետական զարգացման համալիր հետազոտությունը հնարավորություն է տալիս փաստելու, որ Գյումրի քաղաքի վերականգնողական և նոր կառուցվող շենքերի ճարտարապետության բեկումնային և կարևոր սկիզբ էր Դ.Չիսլյանի միջամտությամբ Արթիկ տուֆի վերաօգտագործման, նրա կողմից կրող պատերի նոր կոնստրուկտիվ համակարգի ինտեգրման և «Սեյսմակայուն շինությունների իտալական օրենքները սեյսմիկ տարածքներում» նորմերի կիրառումը:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «Գյումրի քաղաքի XIX դարի և XX դարի առաջին կեսի հասարակական շենքերի վերլուծությունը», ներկայացվում են հասարակական շենքերի ճարտարապետական առանձնահատկությունները հետևյալ հերթականությամբ՝ վարչական, մշակութային, ուսումնադաստիարակչական, առողջապահական, հյուրանոցներ, բաղնիքներ, առևտրային շենքեր: Տրվում են յուրաքանչյուր տիպի կառուցման վայրի, ժամանակի, հեղինակների մասին տեղեկություններ: Գլուխը ավարտվում է համապատասխան եզրակացություններով, որոնցում ներկայացվող շենքերի ծավալատարածական հորինվածքների տարատեսակության առկայությունը ճակատային, ծավալային, հատակագծային, և խոր տարածական լուծումների բացահայտմանը զուգահեռ շեշտվում է կառույցների ոճական առանձնահատկությունները, որոնք ըստ հեղինակի ընդգրկելով հայկական և ռուսական ոճերի համտեղմամբ եվրոպական նեոկլասիցիզմի, էկլեկտիկայի, մոդեռնի ոճերին

բնորոշ կերպարանքին զուգահեռ ներկայացվում են Գյումրուն հատուկ երկու ուրույն ոճական արտահայտչականությամբ շարվածքի՝ «Ալեքսանդրապոլ» և «Ղայթան դարձ» տեսքով:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Գյումրի քաղաքի XIX դարի և XX դարի առաջին կեսի հասարակական շենքերի արդիականացման և վերաօգտագործման հիմնական խնդիրները» ներկայացվում են կառույցների իրավիճակային միասնական գնահատումը, շենքերի արդիականացումը ժամանակակից պայմաններում և հարմարեցված վերաօգտագործումը, ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորին ազդեցության ներուժը ճարտարապետության համատեքստում, ինչպես նաև տրվում են առաջարկություններ և երրորդ գլուխը ամփոփոխ եզրակացություններ: Ըստ այդ եզրակացությունների առաջարկվում է լրացուցիչ կատարել գործառույթների կիրառման շարավղային մշտադիտարկում՝ տվյալները հետագայում օգտագործելու ըստ գործառույթի անհրաժեշտության, տեղայնության և կարևորության՝ հաշվի առնելով բնակչության խտությունն ու շարժը քննարկվող հատվածներում: Գյումրի քղաքի ճարտարապետա-քաղաքաշինական հետագա զարգացման ուղղությունների մշակման փուլում, առաջարկվում է ներգրավել հետևյալ դրույթները.

- քաղաքի հանրային կառույցների զարգացման տեսլական,
- կառույցների գործառական գոտևորում՝ ըստ շինությունների ներկա օգտագործման տեսակների սխեմայի,
- նույն տիպերին պատկանող կառույցների՝ միմյանցից հեռավորությունների կանոնակարգում,
- ըստ սահմանված գործառույթի նշանակության՝ առաջարկվում է մշակել մարդկային հոսքի մոտեցումների, հասանելիության սխեմա,
- կառույցների ծավալատարածական հորինվածքների միջավայրում հնարավորին լրացուցիչ կառուցապատման չափորոշիչների կազմում,
- արդիականացմանն ուղղված, կառուցապատման առկա պաշարների օգտագործման հնարավորությունների ամրագրում և այլ:

Ըստ հեղինակի հետազոտության արգասիքը Գյումրու XIX դարի և XX դարի առաջին կեսին կառուցված 35 հասարակական շենքերի ներկա գործածելիության և իրավիճակային միասնական գնահատումն է: Արդյունքում նրա կողմից խմբավորվել են լավ վիճակի 26, բավարար կանգուն վիճակի 4, վերականգման ընթացքում գտնվող 4, վատթար՝ մասամբ քանդված 3 հուշարձան: Դասդասվել են հին գործառույթով օգտագործվող 20 շինություն, փոփոխված գործառույթով՝ 12 և 7 չօգտագործվող շինություններ: Անրադառնալով Գյումրու շենքերի արդիականացման խնդրին՝ առաջադրվել է 2 հնարավոր տարբերակ՝ արդիականացում առանց գործառույթի փոփոխության և հարմարեցված վերաօգտագործում: Ուսումնասիրությունների արդյունքում առաջարկվում է կիրառել տեխնոլոգիաների, հատկապես «ընդլայնված իրականության» մեթոդը և այլն:

Ատենախոսությունը ավարտվում է **ընդհանուր եզրակացություններով**:

Հետազոտության մեջ տեղեկատվության հավաքման և ամբողջական դիտարկման միջոցով եզրահանգվում է, որ XIX դարից մինչև XX դարի սկիզբը Գյումրու քաղաքաշինական զարգացումն ունի ամպլիտուդային գրաֆիկական տեսք: Արդիականացման և օգտագործման հնարավորություն ընձեռելու նպատակով իրավիճակային միասնական գնահատում է տրվել, ինչի արդյունքում շենքերը դասակարգվել են ըստ պահպանվածության՝ 74%-ը՝ լավ վիճակում գտնվող, 11%-ը վերականգման կամ վերանորոգամն կարիք ունեցող, 11%-ը արդեն իսկ վերականգնվող և 9%-ը կիսաքանդ կառույցներ՝ վերակառուցման անհրաժեշտությամբ:

Հետագա հետազոտությունների համար առաջարկվում է Գյումրու պատմական կենտրոնում կառուցված հուշարձան հասարակական շենքերի գործածելիությունն ամրապնդելու նպատակին ծառայող ճարտարապետական արդիականացման ու հարմարեցված վերաօգտագործման, մակերեսների ավելացման, «ընդլայնված իրականության» օգտագործման առաջարկություններից բացի, հաշվի առնել հետագա լրացուցիչ միջոցների կիրառումը՝ գործառույթների շառավղային մոնիթորինգ (մշտադիտարկում), ենթակենտրոնների ստեղծում, քաղաքի եռաչափ մոդելավորում,կառույցների ծավալատարածական հորինվածքների միջավայրում լրացուցիչ կառուցապատման չափորոշիչների սահմանում:

Ատենախոսության վերջում հավելվածների տեսքով՝ թվով 41, ներկայացված են ինչպես Գյումրու ճարտարապետական իրավիճակը, հասարակական շենքերի տիպաբանական վերլուծությունը ներկայացնող, այնպես էլ թեմային վերաբերվող արտասահմանյան փորձը ներկայացնող պատկերներ:

Ստացված արդյունքների և եզրակացությունների հավաստիությունը:

Դատելով ներկայացվող ատենախոսությունից և սեղմագրից, կարելի է փաստել, որ կատարված աշխատանքի թեման արդիական է և նպատակ ունի կանոնակարգելու և բարելավելու Գյումրու ճարտարապետական կերպարը և քաղաքաշինական միջավայրը: Հետազոտման ընթացքում և ստացված արդյունքների հիման վրա արված եզրակացություններում հստակեցված են ատենախոսի մտահոգությունը Գյումրու հասարակական շենքերի առաջիկա արդիականացման խնդիրների ուղղությամբ և առաջարկվող հանձնարարականներում նկատելի են մոտեցումների նորույթներ: Հեղինակի ստացած արդյունքները կարևոր են ինչպես Գյումրու քաղաքային տնտեսության կազմակերպամն գործում, այնպես էլ Գյումրու քաղաքաշինությանը և ճարտարապետությանը վերաբերվող գիտատեսական ուսումնասիրությունների, ինչպես նաև նոր նախագծային փաթեթ առաջարկությունների պատրաստման համար:

Ատենախոսությունում ստացված արդյունքների հավաստիությունը հաստատված է նաև հեղինակի կողմից գիտական ամսագրերում հրատարակված հոդվածներով և միջազգային գիտաժողովներում կատարված զեկույցներով:

Ատենախոսական աշխատանքի վերաբերյալ կան հետևյալ դիտողությունները.

1. Ատենախոսության սեղմագրի 7-րդ էջում նշված է, որ մշակվել են գործնական նշանակության մի շարք առաջարկություններ (հանձնարարականներ), սակայն ատենախոսությունում դրանք ներկայացված չեն:
2. Հասարակական շենքերի դասակարգումը արված է ըստ տիպերի, նկարագրության տեսքով, սակայն ցանկալի կլիներ ունենալ նաև դրանց արժևորումը թե ճարտարապետական, և թե գեղագիտական առումներով, որպես, թե՛ Գյումրու և թե՛ Հայաստանի պատմաճարտարապետական ժառանգության գանձարանի կարևոր հուշարձաններ:
3. Եզրակացություններում տրված առաջարկությունները հստակ և բավարար հիմնավորված չեն:
4. Հիմնավորված չեն նաև արտասահմանյան փորձը Գյումրիում կիրառելու հրատապության և նպատակահարմարության առջարկները, առավել ևս այն դեպքում, երբ քննարկվող հասարակական շենքերից ընդամենը 20%-ը ունի վերականգնման կամ վերանորոգման կարիք:
5. Հիմնավորված չէ, թե առաջարկվող տարբերակը եթե նույնիսկ ընդունելի է Գյումրիի համար, ապա ինչպես կարող է պիլոտային ծրագիր դառնա մյուս քաղաքների, օրինակ Գորիսի համար:
6. Հստակեցման կարիք ունի «ընդլայնված իրականություն» մեթոդի կիրառումը Գյումրիում (արդյոք պետք չէր կատարել վիճակագրական ուսումնասիրություն):
7. Հստակեցման կարիք ունի նաև արտասահմանյան փորձի կիրառման պայմանում Գյումրու կերպարի ակնկալվող փոփոխությունների խնդիրը, արդյոք Գյումրու դիմագիծը չի եվրոպականացվի:
8. Ատենախոսության և աղյուսակների գրավոր շարադրանքը կարիք ունի խմբագրման, օրինակ փողոցների հին և նոր անվանումները տեքստում և աղյուսակներում իրար չեն համապատասխանում:

Համոզված ենք, որ նշված դիտողությունների վերացման արդյունքում աշխատանքի գիտական արժեքը ավելի կբարձրանա: Ներկայացված վիճակում Շուշան Կարենի Հակոբյանի «Գյումրի քաղաքի՝ XIX դարի և XX դարի առաջին կեսի հասարակական շենքերի ճարտարապետությունը և արդիականացման խնդիրները» թեմայով ատենախոսությունը ավարտուն գիտական հետազոտություն է, որն ունի տեսական և կիրառական նշանակություն:

Ատենախոսության գրավոր շարադրանքը, բարձրացվող խնդիրները և տրված առաջարկությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակը՝ Շուշան Կարենի Հակոբյանը արժանի է

ԺԸ.00.01- «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Շուշան Կարենի Հակոբյանի «Գյումրի քաղաքի՝ XIX դարի և XX դարի առաջին կեսի հասարակական շենքերի ճարտարապետությունը և արդիականացման խնդիրները» թեմայով ատենախոսական աշխատանքը քննարկվել է Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի նիստում, որին մասնակցում էին Մ.Վ.Գրիգորյանը - խորհրդի նախագահ, բանասիրական գիտությունների թեկնածու, Ա.Հ.Գրիգորյանը - ճարտարապետության դոկ. պրոֆ., Նունե Պետրոսյանը – ճարտարապետության թեկնածու, դոցենտ, Ա.Ա. Տեր-Մինասյանը – ճարտարապետության թեկնածու, Ե.Կ.Վարդապետովան – թանգարանի ավագ գիտ. աշխատող, Լ.Մ.Մարգարյանը – թանգարանի գլխավոր ֆոնդապահ: Նիստին հարգելի պատճառով չէր մասնակցում ճարտ. դոկ. պրոֆ. Մ.Մ. Հասրաթյանը:

Ալեքսանդր Թամանյանի անվան
ճարտարապետության ազգային
թանգարան-ինստիտուտի
գիտական քարտուղար Ա.Հ. Գրիգորյան

Ճարտ. դոկ. պրոֆ. Ա.Հ. Գրիգորյանի
ստորագրությունը վավերացնում եմ
կադրերի բաժնի վարիչ՝ Մ.Մելքոնյան